

«Care1st» առողջապահական ծրագիրը ողջունում է Ձեզ

Շնորհակալ ենք, որ ընտրել եք «Care1st»-ը՝ առողջական հարցերով օգնություն ստանալու համար: Մենք ջանք չենք խնայի Ձեզ հետ ամենասերտ կերպով համագործակցելու համար, որպեսզի Դուք հնարավոր լավագույն խնամքը ստանաք:

Դուք խորհրդի կարի՞ք ունեք

Մեր անդամների սպասարկման բաժինը հոգ է տանում Ձեր առողջության մասին: Նրանք կօգնեն Ձեզ հասկանալ, թե ինչ արտոնություններ և նպաստներ է տրամադրում Ձեր առողջապահական ծրագիրը և բժիշկ ընտրել: Նրանք կարող են նաև օգնել Ձեզ՝ Ձեր ունեցած ցանկացած խնդրի կամ հարցի դեպքում: Մեր աշխատակիցները խոսում են անգլերեն, իսպաներեն, զուանդուներեն, հայերեն, ռուսերեն և վիետնամերեն լեզուներով: Եթե Դուք խոսում եք որևէ այլ լեզվով, «Care1st»-ը կրկին կարող է օգնել Ձեզ՝ օգտվելով մեր հեռախոսային քարգմանիչներից մեկի ծառայություններից:

«Care1st»-ի անդամների սպասարկման բաժին կարող էք զանգահարել այս հեռախոսահամարներով: Չանգն անվճար է: Կարող եք զանգահարել երկուշաբթի օրվանից մինչև ուրբաթ՝ առավոտյան ժամը 8:00-ից մինչև երեկոյան ժամը 6:00: Շտապ օգնության անհրաժեշտության դեպքում՝ Դուք կարող եք օրը 24 ժամ և շաբաթը 7 օր զանգահարել այս համարով:

- Եթե Դուք «Medi-Cal»-ի անդամ եք՝ 1-800-605-2556
- Եթե Դուք «Healthy Families»-ի անդամ եք՝ 1-877-777-6843

Ինչպես ենք մենք օգնում Ձեզ

Մենք գիտենք, որ մեր անդամները ներկայացնում են տարբեր մշակույթներ և խոսում տարբեր լեզուներով: Մենք ցանկանում ենք այնպես անել, որ մեր բոլոր անդամները բարձրակարգ առողջապահական խնամք ստանան: Ահա որոշ բաներ, որոնք մենք առաջարկում ենք՝ Ձեզ օգնելու համար.

- ԱՆՎՃԱՐ լեզվական օգնություն՝ օրը 24 ժամ, շաբաթը 7 օր.
- նշանային լեզվի անվճար օգնություն՝ լսողական և/կամ խոսելու հետ կապված դժվարություններ ունեցող մեր անդամներին.
- անդամների ուղեցույց, առողջապահական դաստիարակության գրքույկներ և անդամների համար նախատեսված այլ կարևոր տեղեկություններ՝ անգլերեն, իսպաներեն, հայերեն, չինարեն կամ բոջերեն, ֆարսի, կորեերեն, թագալոգ, ռուսերեն և վիետնամերեն լեզուներով.
- տարբեր լեզուներով խոսող նախնական խնամքի բժիշկներ և մասնագետներ:

Անվճար քարգմանչական ծառայությունները

Դուք կարող եք զանգահարել անդամների սպասարկման բաժին՝ օրը 24 ժամ և շաբաթը 7 օր և գրուցել Ձեր լեզվով խոսող որևէ աշխատակցի հետ: Եթե Ձեզ քարգմանիչ է հարկավոր Ձեր հաջորդ բժշկի այցի ժամանակ, ապա այցելությունից

առնվազն 5 օր առաջ զանգահարեք մեզ 1-800-605-2556 հեռախոսահամարով
առավոտյան ժամը 8:00-ից մինչև երեկոյան ժամը 6:00:

Անվճար փոխադրամիջոց

Եթե Ձեզ փոխադրամիջոց է հարկավոր՝ բժշկին այցելելու համար, խնդրում ենք
զանգահարել անդամների սպասարկման բաժին 1-800-605-2556
հեռախոսահամարով՝ այցելությունից առնվազն մեկ օր առաջ:

Անդամների իրավունքները

Դուք կարող եք տեղեկանալ Ձեր իրավունքների մասին [այստեղ](#):

Ինչպես բողոք կամ զանգատ ներկայացնել

Եթե որևէ պատճառով Դուք դժգոհ եք Ձեր ստացած խնամքից կամ «Care1st»
առողջապահական ծրագրից, մենք ցանկանում ենք իմանալ այդ մասին: Մենք
ցանկանում ենք օգնել Ձեզ: Բացի այդ, մենք ցանկանում ենք լսել Ձեր
առաջարկություններն այն մասին, թե ինչպես կարող ենք ավելի բարձրացնել մեր
ծառայությունների որակը:

Եթե Դուք բողոք կամ զանգատ ունեք, Դուք կարող եք՝

- **գրել, այցելել կամ զանգահարել՝**
Care1st Health Plan Grievance Coordinator՝
601 Potrero Grande Drive,
Monterey Park, CA 91755

Հեռախոս. 1-800-605-2556

Գանգատի դիմումի ձևը կարող եք տպել [այստեղ](#).

- **զանգատի դիմում լրացնել Ձեր բժշկի ընդունարանում.**
- **լրացնել և ուղարկել Համացանցի այս էջում գտնվող զանգատի դիմումի
ձևերը:**

Առողջապահական դաստիարակության ծառայությունները

«Care1st»-ի առողջապահական դաստիարակության բաժինը բազմաթիվ
ծառայություններ է տրամադրում, որոնք կօգնեն Ձեզ և Ձեր ընտանիքին առողջ մնալ:
Մենք կարող ենք Ձեզ տեղեկություններ տալ այն մասին, թե ինչպես կառավարեք Ձեր
հիվանդությունը, Ձեր քաշը, առողջ սնվեք և այլն: Մենք կարող ենք օգնել Ձեզ գտնել
Ձեզ անհրաժեշտ դասընթացները, խորհրդատուներին և օժանդակ խմբերը:

Մեզ մոտ գործում է «**Առողջ կյանք**» տեղեկատվական հեռախոսագիծը, որը
կպատասխանի Ձեր հարցերին՝ խոլեստերինի, քաշի կառավարման,
վարժությունների, ճիշտ սնվելու ընդհանուր կանոնների և շաքարախտի մասին:
«**Առողջ կյանք**» տեղեկատվական հեռախոսագծի ծառայություններից օգտվելու
համար՝ հետևյալ ժամերին խնդրում ենք զանգահարել Լինդա Ֆլիշմանին (Linda
Fleischman) կամ Ռոզա Հերնանդեզին (Rosa Hernandez)՝ 1-800-605-2556
հեռախոսահամարով: Ձանգն անվճար է:

- Երկուշաբթի՝ ցերեկվա ժամը 2-ից մինչև երեկոյան ժամը 5-ը
- Չորեքշաբթի՝ առավոտյան ժամը 9-ից մինչև կեսօրվա ժամը 12-ը

Ինչպե՞ս կարող եմ ես անդամագրվել «Care1st»-ին

Անդամագրումը «Care1st»-ին ձևակերպվում է «Health Care Options»-ի (HCO) միջոցով: Դուք կարող եք ուղղակի գանգահարել նրանց՝ 1-800-430-4263 հեռախոսահամարով: «HCO»-ն Ձեզ անդամագրման փաթեթ կուղարկի, որը Դուք պետք է լրացնեք և փոստով ետ ուղարկեք նրանց: Այն բանից հետո, երբ «HCO»-ն ստանա Ձեր փաթեթը, 15-ից 45 օրվա ընթացքում Դուք կդառնաք «Care1st»-ի անդամ: